

Richmond



Diocese of the Armenian Church of North America

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ Murray Hill 6-0710

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian
Primate

Թիւ 1987
Մարտ 17, 1961

Արժանաշնորհ
Տ. Պօղոս ԲՆՅ. Մանուկեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի

Ս. Եկեղեցւոյ
Ռիչմոնտ.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք 1961, Մարտ 14 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ փետրուար 5ին գումարուած
Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած
անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ,
կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ Տօքթ. Ճօրն Վրանեան
Հէնրի Մակարեան
Ճօրն Տիբատուրեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատ-
ուարժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սի-
րեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի